

Diaspor**Arm**

EXPLORE . UNITE . EMPOWER

«[DiasporArm](#)»-ը հասարակական կազմակերպութիւն մըն է, որուն նպատակն է սփիւռքի առկայ նշանակալից ներուժը ի շարժ դնել, համակարգել գործողութիւնները, աջակցիլ նախաձեռնութիւններուն եւ ստեղծել ցանցայնութիւն՝ որպէս գլխաւոր նպատակ հետապնդելով Հայաստանի Հանրապետութեան եւ աշխարհի հայութեան յառաջդիմութիւնը:



«DiasporArm»-ի առաջնակարգ առաքելութիւնն է բացայայտել տաղանդները, կարողութիւնները եւ կենսական կապերը սփիւռքի իւրաքանչիւր համայնքի մէջ. Սիտնիէն մինչեւ Լոս Անճելոս: Այս նախաձեռնութիւնը կը ներառէ համագործակցութիւն տարբեր համայնքներու, կազմակերպութիւններու, միութիւններու եւ ՀՀ հաստատութիւններու հետ, այն կը ներառէ նաեւ սփիւռքի քարտէսագրութիւնը.

Դպրոցներ

- Բացայայտել, տեղեկութիւն հաւաքել անոնց իրավիճակին, ծրագիրներուն, դասաւանդուող լեզուներուն, աշակերտներու թիւին, արձանագրած յաջողութիւններուն եւ կարիքներուն մասին:
- Անոնց փոխանցել մատչելի ծրագիրներ, լաւագոյն փորձ, գործիքներ, եւ դասաւանդման նորարար մեթոտներ:
- Ներգրաւել կրթական հիմնական շահագրգիռ կողմերը՝ պատրաստելու չափանիշային դասընթացք:
- Ստեղծել անհրաժեշտ միջոցներ, որպէսզի մեր հաստատութիւններուն օգնենք՝ դաստիարակելու հայ սերունդներ, յաջող եւ ազդեցիկ հասարակութեան անդամներ՝ յարգանքի արժանի արժեքներով:

Նմոյշ

Հ.Բ.Ը.Մ. Մանուկեան-Տեմիրճեան վարժարան

Երկիրը՝ ԱՄՆ

Հասցեն՝ 6844 Oakdale Ave, Canoga Park, CA 91306

Հիմնադրման թուականը՝ 1976

Աշակերտութեան քանակը՝ 973 աշակերտ, 1605 շրջանաւարտ

Կայքը՝ <https://agbumds.org/>



Առաքելութիւնը

ՀԲԸՄ-ի Մանուկեան-Տեմիրճեան վարժարանը տասներկամեայ դպրոց մըն է, որ յանձնառու է հայկական ժառանգութիւնը սերմանելու եւ ուսումնական գերազանցութիւնը խթանելու՝ ապահով ու հոգատար ուսումնական միջավայրի մը մէջ: Քուլտժային նախապատրաստական ծրագիրը կը կրթէ այնպիսի աշակերտներ, որոնք կ'ունենան քննողական մտածողութիւն, կ'արժեւորեն իրենց հայկական մշակոյթն ու ինքնութիւնը, եւ պատրաստ կ'ըլլան դիմագրաւելու յարափոփոխ աշխարհիս մարտահրաւերները:

Գրատուներ, հրատարակչատուներ եւ լրատուամիջոցներ

- Բացայայտել գիրատուները, հեղինակներն ու հրատարակչատուները:
- Ցուցակագրել հասանելի բոլոր տպագիր, էլեկտրոնային եւ ձայնային գիրքերը, հրատարակութիւնները, երաժշտութիւններն ու տեսերիզները:
- Սահմանել իւրաքանչիւր միաւորի դասաւորումը, բանալի բառերը, լեզուն, սիւթը, թուականը, վայրը եւ մատչելի առաջարկները:
- Առաջարկել բաշխման կայաններու տրամաբանական համակարգում եւրոպայի եւ հիւսիսային Ամերիկայի մէջ:

«VLUME»-ը հայկական ամենէն մեծ եւ յառաջատար թուային գրադարանն է, որ հնարաւորութիւն կու տայ օգտատէրերուն իրենց նախասիրած գիրքերը կարդալու եւ լսելու՝ իրենց առօրեայ սարքերուն վրայ: Աւելի քան 5 տարուան փորձառութեամբ, հարիւրաւոր ելեկտրոնային գիրքերու եւ հազարաւոր ձայնագրութիւններու, գրադարանը արդէն իսկ շահած է հանրութեան սերն ու գովասանքը՝ շարունակելով մատչելի դարձնել հրատարակութիւնները: «VLUME»-ի գործակցութիւնը Հիւսիսային Ամերիկայի եւ Հայաստանի դպրոցներուն հետ, ինչպէս նաեւ հանրային գրադարաններուն հետ, ինչպիսին է Լոս Անճելոսի հանրային գրադարանը, Կլեմտէյլի արուեստի եւ մշակոյթի գրադարանը, եւ Հայաստանի ազգային գրադարանը, աւելի կը մեծցնէ յաւելուածին հանրային հասանելիութիւնը :

«VLUME»-ը ունի աւելի քան 12 հրատարակչատուներու եւ աւելի քան 300 դասական ու ժամանակակից հեղինակներու բովանդակութիւն: Յաւելուածը կ'աշխատի արեւելահայերէնով, արեւմտահայերէնով, եւ անգլերէնով: «VLUME»-ին գրադարանը կը պարունակէ աւելի քան 1.000 վերնագիր եւ աւելի քան 2.500 ժամ ձայնային բովանդակութիւն:


Կրօնական եւ մշակութային կեդրոններ, հաստատութիւններ, կազմակերպութիւններ, միութիւններ

- Նշել ատոնց առաջնային եւ երկրորդային առաքելութիւնները, ազդեցութեան ծաւալը (տեղական, շրջանային կամ համաշխարհային), ինչպէս նաեւ նիւթական կարողութիւնը, տարեկան պիւտճէն, զոր օրինակ:

Նմոյշ

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ ([ԲՈԱԳ](#))

Երկիրը՝	ԱՄՆ
Հասցեն՝	149 Fifth Avenue Suite 500 New York, NY 10010 USA
Հիմնադրման թուականը՝	2003
Ազդեցութեան ծավալը՝	Համաշխարհային



Առաքելութիւնը

Հզօրացնել Հայաստանի բոլոր շրջաններու երեխաներուն ու պատանիներուն կարողութիւնները՝ համապարփակ միջոցներով եւ նորարար խելացի նախաձեռնութիւններով: Մենք կը բարձրացնենք կրթութեան, առողջութեան, ենթակառոյցներու եւ տնտեսութեան զարգացումը մակարդակը՝ յառաջացնելով կայուն, բարգաւաճող եւ կենսունակ համայնքներ Հայաստանի եւ համայն հայութեան համար:

Նկարագիրը

2003 թուականէն ի վեր «ԲՈԱԳ»-ը Հայաստանի զարգացման համար ներդրած է աւելի քան 100 միլիոն տոլար: Մինչ օրս, «ԲՈԱԳ»-ի ծրագիրները կը գործեն 6 մարզերու 82 գիւղերու մէջ, ինչպէս նաեւ գործած են Արցախի մէջ: Ատոնք դրական ազդեցութիւն ունեցած են աւելի քան 107.239 շահառուներու վրայ՝ կրթական, առողջապահական, ենթակառոյցներու բարելավման եւ տնտեսական զարգացման առումով:

2018-ին, Լոռիի մէջ բացուեցաւ «ԲՈԱԳ»-ի առաջին խելացի կեդրոնը, որ գերազանցութեան եւ նորարարութեան կեդրոն մըն է: Ընթացքին մէջ են Արմավիրի, Գորիսի եւ Կափանի խելացի կեդրոններուն բացումը: Նշանակետն է՝ յառաջիկայ 10 տարիներուն ընթացքին ապահովել առնուազն 10 խելացի կեդրոն (Հայաստանի իւրաքանչիւր մարզի մէջ առնուազն մէկ հատ), այդպիսով տարածուելով ողջ Հայաստանի մէջ: Հայաստանի մէջ նախատեսուած ներդրումները, յառաջիկայ 10 տարիներուն, պիտի գերազանցեն 300 միլիառ տոլարը:

Տարեկան պիւտճէն (2023)՝ շուրջ 10.8 միլիոն ԱՄՆ տոլար

Ծրագիրները եւ ենթակառոյցները՝ շուրջ 93 տոկոս

Վարչական ծախսերը՝ 7 տոկոսէն պակաս

Ձեռնարկատիրութիւններ.

որոնց տէրերը հայեր են կամ ծառայութիւն կը մատուցեն հայկական համայնքներուն,

- Բացայայտել ոլորտը, արտադրանքի կամ ծառայութեան տեսակը, եւ նիւթական կարողութիւնը, եթէ հասանելի է. եկամուտները զոր օրինակ:

ԼՄԻՅ

BelPearl

Արտադրութիւն/մեծաքանակ վաճառք

Սեփականատերը՝ Փիեռ Յաճճար

Հիմնադրման թուականը՝ 1933

Երկիրը՝ Յոնկ Քոնկ – համաշխարհային

Ոլորտը՝ Ոսկերչութիւն

Արտադրանքը՝ Մարգարիտներ

Գործունեութիւնը՝ Արտադրութիւն/մեծաքանակ վաճառք

Մասնաճիւղերը՝ Ճափոն, Ինտոնեզիա, Սինկափուր, Պելճիքա, Քանատա, Եւ ԱՄՆ

Կայքը՝ <https://www.belpearl.com/>



Նկարագիրը

«BelPearl»-ը, որ հիմնադրուած է 1933-ին Սուրիոյ մէջ, համաշխարհային մարգարիտներու շուկային մէջ դարձած է նշանաւոր խաղացող մը, եւ ճանչցուած է որակի նկատմամբ իր անխախտ յանձնառութեամբ: «Որակ եւ ոչ քանակ» նշանաբանով, ընկերութիւնը կ'արտադրէ բացառիկ մարգարիտներ, որոնք բժախնդրութեամբ եւ կատարելութեամբ կը յղկուին:

Իր գործունեութեան ողջ ընթացքին, «BelPearl»-ը զգալի հետք ձգած է արդիւնաբերութեան մէջ: 1962-ին, «BelPearl»-ը գրասենեակ մը կը բանայ ճափոնի Քոպէ քաղաքին մէջ՝ ամրապնդելով Ասիոյ մէջ իր ներկայութիւնը: Յատկանշական է, որ 1972-ին ան կը կոտրէ Չինաստանի պետական մենաշնորհը եւ գրասենեակ մը կը հիմնէ Չինաստանի Կուանզո քաղաքին մէջ: Հպարտալիօրէն 1990-ին կը բանայ 150 հմուտ մասնագետներով մեծ գործարան մը:

Գլխավոր դեմքեր.

համայնքային ղեկավարներ, համայնքի ամենեն ազդեցիկ անդամներ (հայեր ու ոչ հայեր, որոնք համայնքին մեջ ներգրավուած են)

- Գծանշել ազդեցութեան ոլորտները, ինչպես՝ կրթութիւն, հետազօտութիւն, առողջապահական ծառայութիւն, օրէնսդրութեան մշակում, դիւանագիտութիւն, լրագրութիւն, բարեգործութիւն, ձեռնարկատիրութիւն:
- Գծանշել անոնց ազդեցութեան ծաւալը (տեղական, շրջանային, համաշխարհային):

Աւագեան Տիգրան

Երկիրը՝ Ուրբանիա

Ծննդավայրը՝ Ուրբանիա

Տիրապետած լեզուները՝ Ուրբաներէն, արեւելահայերէն, ռուսերէն, անգլերէն, իտալերէն
Ազդեցութեան ոլորտները՝ Քաղաքագիտութիւն, անվտանգութիւն, կրթութիւն, մշակոյթ
Վարած պաշտօնները՝ «Tigran Avakian LIVE» կայանի հիմնադիր



Տիգրան Ա. Աւագեան, երրորդ սերունդի ուրբանահայ, միջազգային վերլուծաբան եւ խորհրդատու, որ մասնագիտացած է քաղաքագիտական եւ անվտանգային հարցերու մէջ: Ծնած է 1975-ին, աւելի քան 15 տարի պաշտօնավարած է համալսարաններու մէջ՝ իբրեւ աշխարհաքաղաքական եւ հակամարտութիւններու գիտութեանց փրոֆեսոր, միեւնոյն ատեն վարած է պետական շարք մը բարձրաստիճան պաշտօններ, յատկապէս՝ Ուրբանիոյ ներքին գործոց նախարարի տեղակալ Եւրոպական համարկման գծով, 2014-2016 թուականներուն:

Ակադեմական աշխատանքներէն զատ, Աւագեան կարեւոր դեր ունեցած է ռազմական բարեփոխումներու ջանքերուն մէջ, եւ մեծապէս նպաստած է Հիւսիսատլանտեան դաշինք-Ուրբանիա համագործակցութեան բարձր մակարդակի քննարկումներուն, յատկապէս՝ իբրեւ Հիւսիսատլանտեան դաշինք-Ուրբանիա բարձր մակարդակի զինուորական բարեփոխումներու միացեալ աշխատանքային խումբի անդամ, 2014-2017 թուականներուն:

Դոկտոր Աւագեանի այլ իրագործումները. հեղինակած է 20 գիրք, ստեղծած է հայկական կայք մը ([հանրագիտարան](#)), արտադրած է [\\$hiu](#) մը՝ խրիմի եւ Ուրբանիոյ հայկական եկեղեցիներուն մասին, միաժամանակ գործուն մասնակցութիւն ունեցած է խրիմի մեծագոյն հնադարեան հայկական վանքի՝ Սուրբ Խաչի վերականգնումին մէջ:

Պարոն Աւագեանը նաեւ աշխատած է որպէս Ուրբանիոյ հայոց միութեան գործադիր տնօրէն:

Նպատակներ

- Տեղեկությունները հասանելի դարձնել՝ որոնելու, գտնելու եւ դասաւորելու կարելիութեամբ՝ ըստ գործունեութեան տեսակի, վայրի, ծաւալի, անհատներու: Օրինակ՝ նաև արհեստագիտութեան, կենսարհեստագիտութեան կամ գրաբարի դոկտորական ուսանողներ, կամ փաստաբաններ եւ այլ մասնագետներ:
- Չարգացնել համագործակցութիւնը եւ համակարգումը անհատներուն եւ կազմակերպութիւններուն միջեւ, որոնք ունին միասնական տեսլական, արժէքներ եւ նպատակներ:
- Ի վերջոյ՝ սպասարկել ներգրաւուած կազմակերպութիւններուն ու համայնքներուն կարիքները:

Տուեալները բաժնուած են 12 ուղղութիւններու, ինչպէս նշուած է ստորեւ

Անվտանգութիւն

Կրթութիւն

Առողջապահութիւն

Բնապահպանութիւն

Մասնագիտական խումբեր

Իրաւաբանութիւն

Տեղեկատուական արհեստագիտութիւն

Արդիւնաբերութիւն

Ծառայութիւններ եւ վաճառականութիւն

Հիւրընկալութիւն եւ զգոսաշրջութիւն

Կազմակերպութիւններ

Գլխաւոր դէմքեր

Անվտանգութիւն >

Կրթութիւն >

Առողջապահութիւն >

Բնապահպանութիւն >

Մասնագիտական խումբեր >

Իրաւաբանութիւն >

Տեղեկատուական արհեստագիտութիւն >

Արդիւնաբերութիւն >

Ծառայութիւններէ վաճառականութիւն >

Յիւրընկալութիւն եւ զբօսաշրջութիւն >

Գլխաւոր դէմքեր >

Կազմակերպութիւններ >

Երկիր Նահանգ կամ մարզ Զարգ

Իրաւաբանութիւն Մասնագիտութիւններ Կազմակերպութիւններ



Կարինէ Կարապետեան
Դատաւոր



Արսէնեան Սարգիս
Պայմանագրային խորհրդատու



Արշակեան Յակոբ
Իրաւաբանական խորհրդատու

Խորհրդի անդամներ և խորհրդատուներ



Յովէլ Շնորհօբեան
Հիմնադիր, խորհրդատու



Պիեռ Արքելեան
Նախաձեռնող



Կարո Արմէն
Նախաձեռնող



Յոլին Սարեան
Խորհրդատու



Սերժ Տէր Յակօբեան
Խորհրդատու



Սեպուհ Պաղտոյեան
Խորհրդատու



Արա Նահապետեան
Խորհրդատու

Մեր անձնակազմը



Անահիտ Թորոսյան
Ծրագրերի համակարգող



Անի Հովհաննիսյան
Ծրագրերի համակարգող



Գարոլ Բէնտիրճեան
Ծրագրի օգնական



Նարէ Քիւսպէրեան
Ձեւագրող



Աւետիս Ափոշեան
Թարգման (արեւմտահայերէն)



Անտրես Եագուպեան
Թարգման (սպաներէն)



Հասմիկ Տեր-Հարությունյան
Թարգմանիչ (ռուսերէն)



Հայկունի Աղաբեկյան
Թարգման (ֆրանսերէն)

Ափիւնքի հայուրեան
կլոր սեղան

Յունիս 18-19, 2022
Փարիզ, Ֆրանսա



Հաւար՝ համահայկական
կազմակերպություններու.
ՀԲԸՄ, ԱՅԱԸ, ԲՈԱՖ, ՀՕՖ,
«Ապագայ հայկականը», եւ
Թուֆենկեան հիմնադրամ:

Մայիս 15, 2023
Երեւան, Հայաստան



Շնորհակալութիւն

Կապային տուեալներ

<https://diasporarm.org/hyw/>

contact@diasporarm.org



Diaspor**Arm**

EXPLORE . UNITE . EMPOWER